

Ամբաս Բիւրաս

Նամբագրութիւն «Փիիւնիկ», Ի Ալեքսանդրիա



S. Bural
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

Նր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր. 15
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՈՒԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՂ. 6

ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹ ԱՊՐԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 9 ԱՊՐԷԼ 1902

ԹԻԻ 46

ՄՏԻՊՈՂԱԿԱՆ

Փիիւնիկի Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆԸ լրանալու մօտ է, բայց եգիպտոսի ու Արտասահմանի մեր բաժանորդներէն շատերը դեռ չեն վճարած իրենց այս տարուան բաժանորդագրութիւնը:

Շաբաթաթերթիս հրատարակութիւնն ու առաքումը կանոնաւորապէս շարունակել կրնալու համար կը խնդրուի որ մեր Պատ. Բաժանորդները հաճին փութով հասցնել իրենց բաժանորդագիրը ՄԱՆՏԱԲՕՍԹՈՎ, մեր հասցէին:

Մ Ա Կ Ե Պ Ո Ն Թ Ա

Խնովութիւնները կը բարդուին Պուլկար սահմանագլուխը. թուրք զօրագնդոց հրամատարը կարնոր հրամաններ խնդրած է գործելու համար: Թուրքերուն ու Պուլկար հրոսախմբերուն միջև արինահանգ ընդհատումներ տեղի ունեցան: Մեծ-Եպարքոսը պատուիրեց Ելմտից Նախարարին որ պա-

հետի դրամը — կա՞յ որ — վար դնէ մօտալուտ պատահականութեան դէմ դնելու համար:

Այս ծանր լուրին նկատմամբ հետեւեալ խորհրդածութիւնները կը կարգանք տեղական Ռէժօրն օրաթերթին մէջ.

«Հալասի հեռագիրը կը ծանուցանէ թէ՛ թուրք զօրագնդոց հրամանատարը հրամաններ խնդրած է գործելու համար:

Գործել որի՞ դէմ:

Պուլկարին՞ դէմ:

Միթէ՛ Պուլկարիան իր քաղաքական գոյութիւնը, անկախութիւնը չը՞ պարտիք ջարդերու երկայն շարքի մը որոնք, շնորհիւ կլատոսթոնի, ամօթէ կարմրցուցին ի վերջոյ քաղաքակիրթ աշխարհը:

Պուլկարիան երբէք չա՞հ չունի խաղաղութենէն. ընդհակառակն, պատրաստ է իր բաժինը զոր անազին կ'երազէ, առնելու հասուն պտուղէն որ մօտ է իյնալու:

Ռուսիան յուզուած է, ըսինք, նոյն պէս ալ Աւստրիան. բայց ասոնք պլատօնական դիտումներ են այն իմաստով որ թուրքիայէ՛ն կուզուի կարգը վերահաստատել մինչդեռ թուրքիան չը կրնար ընել այդ բանը:

Հա՞պա եթէ թուրքիան կարենար բաւականաչափ ուժ հաւաքել յաղթանարելու համար անպատմութիւնը:

Ասի գրեթէ բոլորովին անճշմարտա-

մօտ ենթադրութիւն մ'է գիտնէք, բայց իրագործելու համար՝ դարձեալ անսելի ար-
իւնհեղութիւն կը պահանջէ: Գիտնէք թէ
ի՛նչ ըսել է մակեդոնական սպարապետութիւն
մը զսպելը: Ծանր է կացութիւնը, անլու-
ծելի՝ խնդիրը:

Ի՞նչ կ'ուզէ Եւրոպան, մանաւանդ
Ռուսիան ու Աւստրիան: Սքարաւիրուօն:
Մակեդոնիան պէտք է կառավարուած մնայ
հիմակուան ձեռովը, որովհետեւ Ռու-
սիան ու Աւստրիան, չը հաշուելով միւս-
ները, մանաւանդ Յունաստանը, ունին տեւ-
չանքներ, զորս չ'են կրնար գոհացնել:

Թո՛ղ ջարդեն այրերը, կիները, տղաքը,
թո՛ղ այրեն, թո՛ղ թալլեն, թող յօշոտեն
մարդիկը, ի՞նչ կ'ըլլայ: Բ. Դանէն լոկ կը
խնդրուի որ հսկէ հանրային անգործու-
թեանը. ծանուցագիրներ կը խմբագրեն, բու-
ղոքներ կը ներկայեն ու հանդարտ խղճով
կը քննան մինչդեռ աշխատաւորները հա-
րբատացնելու համար ստեղծուած այդ հիւ-
նալի երկրին մէջ զիրար կը մորթեն առ-
տուրնէ իրիկուն ու իրիկուրնէ առտու:

Եւրոպան չը միջամտեց Հայաստան.
Եւրոպան չը՝ միջամտեր Մակեդոնիա:

Եւրոպան երբէք չը միջամտեր մինչեւ
որ խնդիրները չը ներկայանան իրերուն ու
ժողովը: Կրէտէ, օրինակի համար, հայրենա-
սէրներն ընդզեցան եւ Յունաստանը պա-
տասխանեց իր զաւակներու կոչին: Այն
ատեն Եւրոպան միջամտեց:

Նոյնը պիտի ըլլայ Մակեդոնիա: Ծայ-
րայեղ չարիքէն պիտի գայ դարմանը: Օր
մը մէկը «պիտի վրդովէ տօնը» ու պէտք
պիտի ըլլայ յարգել կատարուած իրողու-
թիւնը:

Մինչեւ այն ատեն դեպքաններուն բու-
ղոքները գրեթէ կշիռ պիտի չ'ունենան
Դրան քով:

Այս պատմութեան ամենայտուակ մասը
սա է որ Մեծ—Եպարքօսը, խոհեմ մարդ, գէշ
լուրերէն օգուտ քաղած է պատուիրելով
որ գանձին պահեստի դրամը վար դրուի ա-
մեն պատահականութեան համար: «Ազա-
տեմ աշխարհ» բանաձեւն է որ ամենէն աւելի
լաւ կը նկարէ Բ. Դրան քաղաքականու-
թիւնն այս բովանդակ գործին մէջ:

(Նախակ Պարսկահայ Գիտնէք)

1902 Մարտ 15|28 Մարտիս

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ԴԱՇՏՈՒՄԸ

Աշնան վերջին օրերուն էր, մի խումբ
հայերի հետ Վասպուրականից անցկենում
էինք Պարսկաստան Աղբակի ճանապարհով.

յոյսներս Ապրուծոյ եւ մեզ առաջնորդող
Վանի պաշտօնանկ պարսիկ հիւպատոսի եւ
երկու եւրոպացի ուղեւորների վերայ դը-
րած: Մեզ հետ ընկերացել էին եւ մի քա-
նի վանեցի տիկիները: Ահա երեւում է
մի բլրակի վերեւից Ս. Բարթողիմէոս ա-
ռաքեալի հոյակապ Վանուց սրտագրաւ
գմբէթները, որի հետ թնդացուցին մեր
սրտերը մի պառաւ կնոջ եւ մի նորահարսի
յանկարծական աղէխարչ լացի ու կոծի
ձայները: Պատուը եւ իւր հարսը ձիւրից
վար իջել էին այստեղ ու մի դարացած
հողակոյտի վերայ թաւալտիւրով իրանց
զլիւնների մագերը պոկում էին, ձայն տա-
լով.

— Կարօ՛ ջան, վեր կա՛ց, է՞ր պակել
ես էս ամայի դաշտում:

Կարաւանը կանկ առեց սոցա գոռում
ու գոչումներից: Մեզ հասկացուցին թէ՛
այս տեղ էր ինկել Կարօն իր ընկերներով,
եւր 1896ի գարնան Յունիստան ամսի կո-
տորածներից դէպի Պարսկաստան էին փախ-
չում:

— Վեր կա՛ց, Կարօ ջա՛ն, թուրք զին-
ւորները պաշարեցին մեր տունը, ահա գէն-
քերդ բերել եմ, վեր կա՛ց, կու՛ր նոցա
հետ, ասում էր դեռատի հարսը՝ որ Կարօի
կիներ էր:

— Վեր կա՛ց. Ոսանիկդ այժմ տասն
տարեկան է. նա այժմ կարող է քեզ օգնել
կու՛ր դաշտում, ասում էր պառաւ տիկինը՝
որ Կարօի մայրն էր: Լալիս էին ու լացա-
ցնում մեզ ամենէն:

Քանի մօտենում ենք վանքին, այն-
քան աւելի ազդվում ենք հակայակերտ շի-
նութիւններից: Ակամայ պատկառանք, ահ
ու սարսափ են ազդում Վանքի, Եկեղեցույ
դրան կերտուածները, որքան աւերիչ ձեռ-
ները ջանացել են հրացանների գնդակնե-
րով քարակերտ պատկերների ոտք, ձեռք ու
գլուխները խորտակել: այնու ամենայնիւ
վիթիարի շինութիւնը չի կամեցել հնա-
զանգվել թշնամիների սանձարձակ յարձա-
կումներին: Երկնաբերձ գմբէթները վկայում
էին թէ հասարակ մարդկանց ձեռքով կամ
ուժով չէին շինուել իրենք, մանաւանդ
դրսի կողմից, այնպիսի նուրբ եւ զգոյշ
միջոցներով միմեանց վերայ դարսել են՝
դարերէ ի վեր մարդկային ոյժից վեր ա-
հագին պալպալ սրբատաշ քարերը, որոնց
առջեւ զուցէ տկարանան արդի քար վե-
րուցող ամենազօրեղ մեքենաները: Այլ
ափսո՛ս, որ հիւսիսարեւմտակողմեան անկիւ-

նը փլչել էր երկու տարի առաջ տեղի ունեցող երկրաշարժից: Հայոց սեփական ուխտասեղի՛ն, առաքելական աթո՛ւոք, այժմ զօրանոցի տեղ է ծառայում օամ. կառավարութեան: Ենորհիւ երկու եւրոպացի ուղեւորները՝ յաջողուեց մեզ եկեղեցւոյ դուռը բանալ տալու ոտտիկան (փօլիս) պաշտօնէի մը հրամանով: Գծուծ շորերի մէջ փաթաթուած մի Հայ, ինչպէս երեւում էր երէցփոխն էր, մի կարծր բանալի ձեռքում, զողողալով մօտեցաւ մեր ընկերներից միոյն ձեռքը համբուրեց, որի երկար շորերը եւ միբուքը յայտնում էին թէ եկեղեցական էր: Գիշ վերջ յայտնուեցաւ նաեւ մի կարճիկ ու շատախօս անձնաւորութիւն որ վանքի միակ տիրացուն էր — ցոյց տալու մեզ առաքեալի գերեզմանը, մասունքների տեղերը, խորանները, պատերի մէջ շինուած գաղտնի անցքերն ու մուտքերը, որոց կարգին՝ անդադար պատմում էր բողոքի ձեւով վանքի գլխին եկածները, վանահօր սպանուելը, փախստական հայ տղոց ջարդուելը. վանքի սրբազան անօթներու եւ հարստութեանց կողոպտուելը, երբեմն տաք տաք հայհոյանքներ խառնելով պատմութեան կարգին, թթուացնելով դէմքը ծխրտացնում էր նաեւ հառաչախառն անէծքները դէպի նահատակուած վանահայրը, որը չէ կամեցել փախստական տղոց տեղ տալ, վախնալով կառավարութեան սպառնալիքներից:

Մեզ հետ ընկերացող ու հայերէն գիտցող եւրոպացիները ձանձրանալով շատախօս Աւագ տիրացուի — այսպէս էր կոչվում — պատմութիւններից, ուզում էին մի վայրկեան առաջ դուրս ելլել գիշերային մթութիւն ունեցող գիծահոտ եկեղեցիէն, սակայն նա առաջներս կարում վռազ—վռազ պատմում էր ու պատմում տեսածներն ու լսածները, մերթ այրած սրտից հառաչանքներ արձակելով:

Գուրս կնք ելնում եկեղեցուց, տիրացուն ցոյց է տալիս.

— Ահա այս վայրում մորթոտեցին երկու վանեցի պատանիներին որոնք չ'ուզեցին հաւատաւորի լինել:

Երկու մեծ բակերից մտնելով դուրս եկանք, ամեն մի քայլափոխին աղեկատու պատմութիւններ յայտնութիւններ էր անում համարձակախօս տիրացուն, հայ սիրտ ունեցողի երակներն արիւնաքամ անելով: Նա յայտնում էր մեզ զանազան քիւրս ցեղապետների անուանները, որոնք աւերած


ներ էին արել: Զայրոյթը կատաղութեան է փոխվում ամէն հայ անցորդների, դեռ վեց տարի էր անցել այն օրից, երբ այս ստակալի գաղանութիւնները տեղի էին ունեցել. ո՛ր գիտէ, քանի՛ քանի տարիներ էլ պիտի անցկենան եւ ինձ նման ուղեւորներ անցկենալով այդ վայրերից, պիտի ողբան, խանձին, մղկտան ու մռնչեն ծանօթ սիրելիների գերեզմանների վերայ:

Երկու ժամ դադար աւելելուց վերջ՝ անցկենում ենք վանքի յորդահոս դեաք, որի ափերից սկսեալ արհեստական բլուրի վերայ կառուցուելէ Բարթողիմէոս առաքեալի վանքը, եւ ինչպէս պատմում են, կամարների վերայ շինուած ու տակը բոլորովին պարապ թողուցուած: Հայոց աշխարհի հրաշալի հնութիւններից միւնը, որ սակայն մինչեւ այս օր անծանօթ եւ անձեռնմխելի է մնացել հնախոյզներից, ո՛վ գիտէ թէ քիչ ժամանակից վերջ ի՞նչ յայտնութիւններ առաջ պիտի բերէ եւ այս հնութիւն համարուած յայտնի մեհաստանը: Վասն զի տիրացուն պատմում էր թէ նոյն միջոցներում ախոռատնում մի ծակ էր բացուել, որ տեղից որքան քարեր էին քցել, չուանները ծայրերից երկաթ ու ծանր կաղարներ էի՛ կապել եւ ծակից վար իջուցել, բայց չէին կարողացել տակը գտնել: Լապտերի միջոց չէր տուել դուրս փչող սաստիկ քամին: Սյրպէս հաստատում էին եւ միւս գեղացիները:

Վանքից դեռ քսուորդ ժամաչափ կնք հեռացել, դարձեալ լաց, կոծ, աղաղակ: Կարաւանն իրար գլխովն անցկենում. մի հսկայադիր գերեզմանի շուրջը բոլորել են մեր ուղեկիցներից աւելի քան երեսուն տղայ եւ կին մարդիկ, ողբալի եւ աղեխարչ տեսարան են ներկայացնում, հարիւրաւոր սիրելիների անուններ են տալիս: Հողաբլուրից դուրս են կանչում իրենց հողահատորներին, որոնք թուրքի եւ քրդի զրնտակներից ընկել են աստ: Հազարաւոր անձերի սկիբրտիք այս հողատապանումն են ամփոփել: Օ՛հ. տեսնողի արիւնը ետ է գալիս, մի վայրկեան մոռանում է ամենայն ինչ, ու «Վրե՛ժ» է մռնչում. կարծում ես նահատակներն իրենք էլ հողի տակից անէծք են ուզում անտարբեր անցորդների գլխներին: Այս տեղ ինկած էր իւր հարիւրաւոր ընկերներով անմահ Ա.Ի.ԵՏԻՍԵԱՆԸ...:

ԲԱՐԻՉԻ ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

(Պրակցութիւն էսքուկարի)



Բարից 24 Մարտ 1902

Մօտ երկու շաբաթներէ ի վեր, Բարիցի հայ ուսանողները շաբաթական մէկ երկու ժողովներ կրնեն Բարիցի արհարաններէն մէկուն մէջ: Այս հաւաքումներուն նպատակն է երկու ուսանողներ ընտրել՝ իբր պատգամաւոր «Բարիցի հայ ուսանողութեան» եւ ղրկել ժընէվ կազմուելիք հայ ուսանողական կոնկրէտին մէջ թիւ կազմելու:

Մեզ կիմացնեն թէ երկու՝ զրտէն եկող՝ պարոններ, խիստ ոգեւորուած, այդ ժողովներուն հոգին կը կազմեն եւ նոյն իսկ անոնց զրդամբ այդ հաւաքումները տեղի կունենան: Անուշաքաղափարը շատ գեղեցիկ է եւ մենք շատ լաւ կը մըրնենք որ բոլոր այն ֆաղակներն որոնք «հայ ուսանողութիւն» մը ունենալու բաղձն ունին, ղրկեն իրենց ներկայացուցիչը կամ ներկայացուցիչները: Կը հասկընանք, զ, օր, որ Բերլին, Լայպցիկ, Միւնխէն, ժընէվ, Նանսի, Մօնպէլիէ, Են, Են, ներկայացուցիչներ ղրկեն տեղի ունենալիք ուսանողական կոնկրէտին, որովհետեւ կը կարծուի հետուէն — եւ մենք կը սիրենք հաւատալ — թէ այդ ֆաղակներու մէջ հայ ուսանողութիւն կայ, դժբաղդաբար նոյնը կարելի չէ այլեւ Բարիցի համար ըսել, որովհետեւ այսօր Բարիցի մէջ եթէ դեռ մի քանի ուսանողներ կան, ցիրուցան, ուսանողութիւն չկայ, այսինքն ուսանողական մարմին մը, ուժ մը գոյութիւն չունի: Եւ ասոր պատճառը շատ պարզ է եւ հասկնալի. ուսանողութիւն այնտեղ միայն կրնայ գոյութիւն ունենալ ո՛ր բաւական թուով ուսանողներ (կանոնաւոր եւ ազատ) կան եւ կը սիրեն իրա-

րու մօտեմալ, իրարու հետ շփուիլ, ամէն կարգի գաղափարներ փոխանակել, վիճել, վիճարանել եւ ի հարկին միասին գուարճանալ, քէճ ընել:

Արդ Բարիցի մէջ այսօր ոչ հայ ուսանողներ կան — լայն մտնով խօսելով — եւ ոչ ալ՝ եղածներն իրարու մօտեմալու միջոցն ունին: Ո՛ր հաւաքումին. կեդրոնատեղի մը չունին, եւ արդէն շատ հոգիներու համար կեդրոնատեղի մը ունենալը թէ անտեղի է եւ թէ բաւական սուղի կը նստի: Մեծաբա՛ն հաւաքումին. բայց արհարանի մէջ մի քան խմելու է եւ գինը վճարելու, որը 30 էն 60 ի կը նստի, իսկ ուսանողի, մանաւանդ հայ ուսանողի գրպանը միշտ ծակ է եւ իւր կարողութենէ վեր է միշտ 30 կամ 40 սանդիմ վճարելու: Ճաշարանն հաւաքումին. — մեր ուսանողներէն քանի՞նք նաշարան կ'երթան. անոնց համար շատ ատելի շահաւոր է քիչ մը ուտելիք գնել եւ իրենց սենեակի մէջ նաշել: Համալսարանի՞ կամ դպրոցի մէջ իրարու հանդիպին, — բայց չէ՞ որ ամէնքը մի եւ նոյն դասախօսութեան չեն հետեւիր: Իրարու սենեակի հաւաքումին, — բայց չէ՞ որ, ընդհանուր առմամբ, Բարիցի ուսանողական սենեակներն ատելի խրոցիկներ կամ լաւ եւ ծակեր են, ուր գուցէ երկու հոգիի տեղ զմեռուի, բայց երբորդ եւ չորբորդի մը տեղ նաշելու համար ճիգիֆական հրաշք մը գործելու է. ուրեմն այսօրուան օրս, Բարիցի քանի մը հայ ուսանողներն իրական միջոց մը չունին իրարու հանդիպելու եւ կազմակերպուելու:

Բայց այս միջոցիս քանի՞ ուսանողներ կան հայ՝ ճեմնասայի մայրաքաղաքին մէջ:

Որո՞ւ եւ հիմնական տեղեկութիւն մը ֆաղելու նպատակով, մենք դիմեցինք երկու ուսանողներու եւ անոնք մեր հարցուփորձին հետեւանք: Առաջին ուսանողը՝ բժեկական համալսարանի

երորդ սարիէն, մեզ կը պատասխանէ: «սանի չափ բժշկութեան հետեւող հայ ուսանողներ կան, սասնրիկնոց չափ ալ ուրիշ զանազան նիւղերու հետեւողներ կան. որոց գրեթէ ամէնքն ալ ազատ ունկնդիրներ են եւ ոչ կանոնաւոր ուսանող»:

Եւրորդ ուսանողը՝ նոյնպէս երորդ սարուան ուսանող՝ հարսարուեսի բարձագոյն վարժարանի մը, մեզ կ'ըսէ թէ «կանոնաւոր հարս ունեցող ուսանողներ հազիւ թէ 10-12 հաս ելլեն, կան ուրիշ քանի մը հաս ալ որոնց ինչ լինելը յայտնի չէ»: Ուրեմն այս երկու անհերքելի վկաներու ըսածին նայելով. այժմ Բարիգի մէջ կը զտնուրի մօտ քան հայ ուսանողներ, որոնց միայն 10-12ը իսկական ուսանողներ են — մենք ենթադրեմք թէ 15ը հեմարիս ուսանողներ են — իսկ մնացածներուն ինչ լինելը յայտնի չէ:

Եւ նկատեցէք որ այս դրութիւնը կը շարունակէ երեք չորս սարիներէ ի վեր. երեք չորս սարիներէ ի վեր Բարիգի հայ ուսանողութիւնը քայքայման եւ ոչընչացման վիճակի մը մէջ է եւ դատարարուած է անդառնալի կերպով:

Աւա՛ղ, ո՛ր են այն թուականներն ու աստիճանները որ Բարիգի մէջ 65 էն 70 մինչեւ ութսուն ուսանողներ կը հաշուէինք եւ ասոնք կանոնաւոր՝ հարս ունեցողներ: Միայն բժշկութեան հետեւողներու թիւը 40-50էր, իրաւաբանութեան կը հետեւէին 8-10 երիտասարդներ, գրականութեան 5-6, գիտութեանց եւ հարսարուեսի 10-15 ուսանողներ, գեղարուեստի զանազան նիւղերուն՝ 10-12 երիտասարդներ...: Ուր երբ ուսանողական ժողով մը տեղի կ'ունենար, առնուազն 25-30 հոգի ներկայ կը լինէին: Կը յիշեմ 92 էն մինչեւ 97 թուականներուն, մի քանի ուսանողական ժողովներ որոնց մէջ 50-70-100, մինչեւ իսկ 120-150 հոգի՝ ուսանող (կանոնաւոր եւ ազատ ունկնդիր) եւ

առկա թուով ոչ-ուսանող երիտասարդներ ներկայ եղան...:

Այդ թուականներուն եւ անելի առաջ, Բարիգի մէջ ուսանողութիւն կար, ուժ կար եւ այդ ուժը գործեց, բանախօսութիւններ սարեց, հարցապնդումներ առաջ բերաւ, գրեց աչ ու ձախ բերթերու եւ հանդէսներու մէջ, երեկոյթներ տուաւ, դրամ հաւաքեց հայերէն եւ օտարներէն ու զրկեց ուր որ անկէր, ուր որ պէտքը կզգացուէր:

Բայց ասոնք հին ուսանողներ էին որոնք Բարիգ եկած էին 1886-87 թուականներուն եւ անելի դիւրութիւններ ունէին Բարիգի մէջ ուսանող լինելու եւ իբր այն ապրելու, թէպէտ անոնցմէ շատերուն ամսականը 100 ճրանկէն անդին չէր անցներ — եւ հանչցայ մի քանիսը՝ որոնց ամսականը 65-70 ճրանկ էր — բայց այն ժամանակ հայ ուսանողներու մէջ մեծ եղբայրսիրական զգացում մը կը տարէր — հետեւեալ գուցէ անոնց բազմաթիւութեան — եւ այս ինչ ուսանողին՝ ուսանողութեան դրամով ապրելու երեւոյթը, զարմանալի բան մը չէր եւ ոչ ալ ամօթ մը իւր ընկերներուն երեսէն ապրողին կամ ապրողներուն համար...:

Այս ալ անելցնենք որ մեր ժամանակները հայ բարեբարներու թիւը բաւականին մեծ էր, եւ մեր ընկերներէն շատերը, տեսակ մը պարծանքով կը խոստովանէին թէ Պր. այսինչն է իրեն ամսական տուողը, եւ իրենց երախտագիտական զգացումը միշտ կը յայտնէին, որովհետեւ այն բարեբարներու շնորհիւ իրենք մարդ եղան...: Բայց այդ բարեբարները կամաց կամաց հրապարակէն փառուեցան՝ մեռնելով կամ սնանկանալով եւ կամ անտարբեր դառնալով:

Ճրանսական սենեկին 94 թուականին, օտար ուսանողներու նկատմամբ, փութարկած օրէնքն անագին հարուած մը տուաւ ընդհանրապէս օտար ուսանողներու եւ մասնաւորապէս հայ ու-

սանդղութեան. Իսկ երբ օրէնքը սկսաւ գործադրուիլ, եւ մի եւ նոյն միջոցին մեր աննկարագրելի ձախողութիւնները պատահեցան ուր Վիրգիլիոսի բաժինը պէս՝ *nos dulcia loquimur arra, nos patrious fugimus* (մեր սիրուն դաւերը կը թողունք, եւ մեր հայրենիքէն կը փախչինք) եւ ամէն բան տակնուվրայ եղաւ, Բարիզի ուսանողներու թիւն ալ այդ երկու հարուածներուն տակ երթալով նուագեցաւ, բարակ ցաւէն բռնուած անձի մը նման սկսաւ հիւծիլ ծիրիլ... եւ այսօր Բարիզի հայ ուսանողութիւնը դառն է հաստատելը, խիստ դառնագոյն եւ ըսելը — գրեթէ հաւասար է զէնօրի. Իսկ այս բանը գիտցէ՛ք որ մեր դժբաղդութեանց ամենամեծն է եւ անդարմանելին:

Slorken Est-Ouesti
ՄԵԼԻՔ Ս. ԴԱԻԻԹՅԷԿ

Ք Ր Ո Ն Ի Կ

Ա Ձ Գ Ա Յ Ր Ն

— ՎՍԵՄ. ՊՕՂՈՍ ԲԱՇԵԱ. ՆՈՒՊԱՐ ներկայ 5 ամսաթիւ նամակ մ'ուղղելով Պատկ. Ընտրող. Ժողովոյ Արժ. Նախագահին, խընդրած է որ անյապաղ Ընտրող. Ժողովոյ միւս անդամներուն ալ ստորագրել տայ ընտրութեանց Տեղեկագիրը, զոր ինք ստորագրած ու վերագրածուցած է Նորին Արժանապատուութեան:

Նորին Վսեմութիւնը յիշեալ նամակով խընդրած է նաեւ որ Արժ. Նախագահ Հայրը փութով վերջացնէ ստորագրութեանց գործողութիւնն եւ Տեղեկագիրը ներկայէ Դեր. Ս. Առաջնորդին առ ի պատշաճ անօրինութիւն, կամ որ նոյն է առ ի վաւերացումն Նորընտիր Սահմանադրական Խորհուրդին:

Ինչպէս յայտնի է, Ս. Առաջնորդը նոր թաղ. Խորհուրդին ընտրութիւնը կը վաւերացնէ, մասնաւոր կոնգրակով մ'օրհնելով զայն: Ընտրող. Ժողովին Արժ. Նախագահին պաշտօնն է հրաւիրել Նորընտիրներն

եկեղեցին եւ ի ներկայութեան ժողովուրդին կոնգրակը կարդալով պաշտօնի կոչել զանոնք: Նորին Արժանապատուութեան պաշտօնն է միանգամայն առաջին նիստը զուժարել տալ եւ հսկել Դիւանի կազմութեան ու պաշտօնաբաշխումին:

Այսպէս, կը յուսանք թէ ա'լ վերջ կը դրուի կարգ մը վայրաբանութեանց եւ անխմատ ու աղտոտ հրատարակութեանց, որոնք ամեն ուշիմ ազգայնի նողկանքը կը շարժեն:

Մեր Նորընտիրներէն ոմանք Օսկանեան հպատակ չե'ն. անոնք նիւրախան կարողութիւն ալ չունին եղեր... չեզոքի շապիկը հագած այն ինկած կուսակցամուկին յանկերգը թող մնան այդ երկու անձան առարկութիւնները: Չե'նք մեղադրել զինք ու իր նմանները, ընդհակառակն, կը խղճանք իրենց վրայ:

Ահա՛ իրականացան ժողովուրդին յոյսերը: Վսեմ. Պօղոս Բաշա Նուպար նոյն ժողովրդական, նոյն ուղղամիտ եւ նոյն հեռատես վարչապետը կը յայտնուի իր բոլոր արարքներովը, որոնք ազգին օգուտն ու փառքն աւելցնելու բնութիւնն ունին:

Մաղթենք որ մեր Պատկ. Նորընտիրները շուտով անցնին պաշտօնի գլուխ եւ ղեկավարեն ազգ. գործերը, որոնք ժամանակէ մ'ի վեր երեսի վրայ թողուած են:

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

— ԾԱՆՐԱԿԵԻՌ ԼՈՒՐԵՐ. ՌՈՒՍԱԿԱՆ ՌԻՃԵՐԸ ՇԱՐԺՄԱՆ ՄԷՋ. — Անգլիական գլխաւոր լրագիրները կ'ընդունին Ռուսիոյ իրենց թղթակցէն խիստ ծանրակշիւ հեռագիրներ, զորս ամենամեծ վերապահումով պատշաճ է հրատարակել:

ՄՕՐՆԻՆԿ ԲՕՄԹ հեռագրով կ'իմանայ Օտէսայէ թէ՛ այդ քաղաքին մէջ յոռեշուկ զրոյցներ կը շրջին 48 ժամէ ի վեր: Հաւաստի աղբիւրներէ քաղուած տեղեկութիւններու վրայ հիմնուող վստահելի անձեր կը յայտարարեն որ՝ եթէ Դուռը գոհացուցիչ պատասխան մը չը տայ Կ. Պոլսոյ Ռուսական դեսպան Տ. Ջինովիէֆի բողոքներուն, շուտով վերջնագիր մը (*ultimatum*) պիտի ուղղուի օսմ. կառավարութեան: Սեւ ծովուն Ռուսական տորմիզը պիտի նաւաքոյց մ'ընէ այս առթիւ Անատոլուի եղերքներն ու Վոսիտրի առջեւ:

Նոյն թղթակիցը Սեվաստարոլի հե-
ռագրէ մը կ'իմանայ թէ՛ սկսած են շարժ-
ման մէջ դնել զբեթէ բոլոր նաւատորմի
միութիւնները:

Օտէսայէ Սրահսարսի ընդունած հե-
ռագիրն ալ կը հաստատէ այս լուրը: Իր
թղթակիցը կրտէ թէ՛ Սեվաստարոլի գին-
ւորական բարձր անճնաւորութենղ մը լը-
սած է որ սորմիղին ամենահզօր նաւերը
պատերազմական վիճակի մէջ դրուեցան 2
օրէ ի վեր, եւ կազմ ու պատրաստ են մեկ-
նելու առաջին նշանին: Սպաներն ու նա-
ւատախները բոլորն ալ իրենց նաւը կեցած
կ'սպասեն հրամանի:

Կամաւոր տորմիղին յաճաւորակներէն
երեք արագ ու ամենամեծ մարտանաւեր,
որոնք Մայրապոյն Արեւելք մեկնելու վրայ
էին, Սեվաստարոլ բռնուած մնացին:

Միւսնոյն հեռագիրը կը ծանուցանէ
թէ՛ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԳԼԻՆԻՆ ՎՐԱՅ
ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՀԱԿԱՆՈՆՆԵՐԸ ՉՕՐԱՅՈՒՑԻՆ
եւ հարաւային Ռուսիոյ զօրագնդերը շարժ-
ման մէջ դրուեցան:

— ԱԼԲԱՆԻՈՅ ԱԿԻՍՏԱՐԻ ԵՐԿՈՒ ԵԿԵՂԷ-
ցիներ քանդուեցան թուրք զօրքերէն, ամ-
բողջ բնակչութիւնը գրգռուած է:

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԳ

Ով որ կը փափագի սենեկին գե-
ղեցիկ եւ արժանավայել զարդ մը ա-
ւելցնել, թող բարեհաճի դիտել մեր
հասցէին 2,50 Փրանկ, 1 բուլլի կամ
50 սէնթ, փոխաւէն՝ ապահովագրեալ
ծրարով, կ'ընդունի Հայոց սիրելի ՆԱ-
ՀԱՊԵՏԻ Հ. ԱԼԻՇԱՆԻ մեծադիր լուսա-
սիպ պատկերն, յասուկ խնամով սրպ-
ուած 50 էն 65 հարիրամետր մեծու-
րեամբ, փայլուն եւ usուար թուղթի
վրայ: Գործակալաց եւ մեծախնակ
գնողաց իրախանցիր սաւր օրինակի
վրայ մէկ օրինակ ձրի կը դրկուի:

Իրանը կանխիկ

Simon Nahabed & Co.

VENISE
(Italie)

S. Giov. Grisostomo 57 15

ԾԱՆՕԹ. Կը փութակի յայտնեղու ազ-
նիւ ազգայնոց որ ի մօտոյ պիտի հրատարա-
կեմք նաեւ մեծադիր լուսասիպ, առաջնա-
կարգ եւ ամենահետաքրքրական պատկեր մը,
որ կը ներկայացնէ հռչակաւոր ազգային
գործիչներու ժողով մը:

Նոյն պատկերի նկարասիպ ֆարսերն եւս
կը պատրաստենք:

ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Սուրխացի հայ երիտասարդ մը, սա-
րիներէ ի վեր Եգիպտոս հաստատուած,
Եւրոպական քանի մը լեզուներու հմուտ,
ու քաջ արարագէտ միանգամայն, պատ-
րաս է վաճառականաց արարերէն
թղթակցութիւնները կատարել գոհացու-
ցիչ պայմաններով:


Մանրամասնութեանց համար դի-
մել Խմբագրասունս կամ «ԱՐԱՔՍ» ի
սպարանը:

«ԱՐԱՔՍ»

Հայկական տպարանը թէ՛
Հայերէն, թէ՛ գաղղիերէն և
թէ՛ ուրիշ լեզուներով ամեն
տեսակ տպագրական գործեր
կը կատարէ մեծ խնամով եւ,
ինչ որ նուազ կարեւոր չէ,

ԽԻՍՏ ՉԱՓԱԻՈՐ ԳԻՆԵՐՈՎ:

ՏՕԳԹ. Ս. Վ. ԵԶԵԿԻԷԼԵԱՆ



Ամերիկեան բժիշկ եւ վիրաբոյժ, մասնաւորապէս կը դարմանէ ջղային սկարուրիւնները ելեկտրականութեամբ, նաեւ կուրծքի, եւ ներքին գործարանաց հիւանդութիւնները : Աղբօսներուն կը նայի ձրիաբար: Առ այժմ կը բնակի «Rue el Caied Gobar» անուն փողոցին մէջ թիւ 24 սան 2րդ յարկը, Մօրէլի խանութին մօտը: Ժամերը 10-11 կէս օրէն առաջ, եւ 3-5 կէս օրէն յետոյ:

Յիշեալ Տօգբէօրը նաեւ տարիներու ուսումնասիրութեամբ լիովին համոզուած ըլլալով թէ կարելի է առաջուրնէ որոշել սեռի տեսակը ըստ կամսայն ծնողի որ ու եւ է պատճառաւ նախամեծար կը համարին մանչ կամ աղջիկ գաւազ ունենալ, երեսն թէ՛ անձամբ եւ թէ՛ նամակաւ իրեն զիմել եւ այդ մասին ձեռք առած ամենա-

պարզ եւ միանգամայն ամենագոհացուցիչ միջոցներէն օգտուիլ: Իր պայմանները դիւրամասշտի են, եւ վարձատրութիւն չի պիտի պահանջուի ակնկալուած արդիւնքը երեսն գալէ առաջ:

Նամակները պէտք է բովանդակեն նամակագրուի, եւ ուղղուին հետեւեալ հասցէին. *Dr. S. V. Ezekielian, Post-Restante, Alexandrie (Egypte):*

Գ. ԵՒ Ա. ԹՕԳԱԹԵԱՆ ԵՂԲԱՐՔ

ԿԱԶԵՂԻՆԱՑ ՅԱՐԴԱՐԻՉՔ

Tapissiers et décorateurs

Քաղաքիս երեսիլի հայ տներուն ծանօթ յանախօրդ, կը պատրաստեն գոհացուցիչ պայմաններով ամեն տեսակ կահեղէններ, վարագոյր, եւն:

Յանձնարարութիւնք խնամով կը կատարուին:

Դիմել, Աղղարիկ, Ռիւել-էլ-Զախապի, *Attarine Ruelle-el - Zababy*

SALAMANDER

ՍԱԼԱՍԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդգէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Դրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդգէմ հրդեհի ինչպէս նաեւ Մովային, Իետային և Յամաքային փոխադրութեանց արկածներու գէմ:

Դիւրամատչելի դներ և պայմաններ

Դիմել առ Ընդհանուր Գործակալ եւ Լիազօր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆՍ

Աղեփսանդրիս, պզտիկ Մեկշիտ Ապոստոսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Դրամագլուխ 5,000,000 ֆրանկ